տուծոյ պատգամն. «նչ միայն հացիւ
կեցցէ մարդ, այլ ա՛մենայն բանիւ որ

ելանէ ի բերանոյ Աստուծոյ՝ կեցցէ
մարդ»: (Բ. Օրի. Ը. 3): Աստուածա-
շունչ պատգամն կը կրկնէ այս պա-
տուէրը՝ մանանայի պարգեւն յիշեցը-
նելով:

Փրկչին այս յաղթական օրինակին
հետեւելով, կազատենք այն ամեն
ստուծիւններէն. որոց տեղի կտան
աստուածանդէտ մարդիկ՝ որպէս թէ
թշուառութենէ զերծանելու նպատա-
կով. ըստ միեւնոյն ժամանակ աւելի
եւս թշուարութիւններու պատճառ
կլինին իրենց ընկերներուն: Փրկչին
այս խօսքովն կհեռանայ ստուծեան
հայրը սատանայ:

Գ.

«Յայնժամ առեալ ածէ զնա
սատանայ ի քաղաքն սուրբ. և
կացուցանէ զնա ի վերայ աշտա-

րակի տաճարին, և ասէ ցնա. ե-
թէ որդի ես Աստուծոյ. արկ
զքեզ աստի ի վայր. զի գրեալ
է թէ Հրեշտակաց իւրոց պա-
տուիրեալ է վասն քո, և ի վե-
րայ ձեռաց բարձցեն զքեզ, զի
մի երբէք հարցես զքարի զոտն
քո: Ասէ ցնա դարձեալ Յիսուս,
գրեալ է. թէ Ո՛չ փորձեսցես
զտէր Աստուած քո»: (Մատ.
Դ. 5—7):

Մարդիկ՝ որ հացի խնդրի դժուար-
ըութեան չեն պատահած՝ ստույթեան
կմետին Աստուծոյ հաւատքը փորձե-
լու ստուգելու անհաւատութիւնում,
այս վտանգն եւս յաղթանակով կան-
ցունէ փրկիչը: դարձեալ Աստուծոյ
պատգամն յիշելով, թէ գրեալ է,
« Ոչ փորձեսցես զտէր Աստուած քո »:

(Բ. Օր: Զ. 16): Աստուծոյ հաւատ-
քը փորձելու անհաւատութիւնն՝ ա-
մենամեծ վտանգն է մարդկան՝ ստու-
թեան մէջ ընկնելու կամ ճշմարտու-
թենէ մոլորուելու, որուն կյաղթէ
Փրկիչն՝ Աստուծոյ խօսքին հաւատքն
անսպասան կերպով պահելով, եւ չը-
փորձելով, որուն հետեւողն երբէք
չխոտորիր Աստուծոյ պատուիրանէն
կամ նորա սահմանած ճանապարհէն:
« Բո տէր Աստուածդ չփորձես, պատ-
գամն կերկրորդէ Մովսէս. յիշելով
այն փորձութիւնը՝ զոր կփորձէին Իս-
րայէլի՝ որդիքը ծարաւուտ անսպա-
տում ջուր խնդրելով եւ տրտնջելով,
թէ առանց ջրի պիտի մեռնեն անա-
պատումն: Այս տրտունջն՝ Աստուծոյ
խօսքին ճշմարտութեամբ չհաւատալ-
նուն հետեւանքն էր. չէին հաւատար-
թէ մարդկան հացն ու ջուրն՝ Աս-
տուծոյ պարգեւն են, Այս անհաւա-
տութեան վտանգը կանհետանայ, ե-
թէ անսպասան կերպով հաւատանք

Աստուծոյ ամենակարող զօրութեան,
որուն օրինակը տուաւ Փրկիչը՝ «Մի
փորձեսցէս զոէր Աստուած քո, պա-
տուէրն յիշելով:

Դ.

«Գարձեալ առնու ածէ զնա
սատանայ ի լեառն մի բարձր
յոյժ, և ցուցանէ նմա զամե-
նայն թագաւորութիւնս աշխար-
հի, և զփառս նոցա. և ասէ
ցնա. Զայս ամենայն քեզ տաց,
եթէ անկեալ երկիր պագանիցես
ինձ: Յայնժամ՝ ասէ ցնա Յի-
սուս. Ե՛րթ յետս իմ՝ սատանայ,
զի գրեալ է. Տեառն Աստուծոյ
քում՝ երկիր պագցես, և զնա
միայն պաշտեսցես: Եւ պա եթող

զնա սատանայ. և ահա հրեշ-
տակք մատեան և պաշտէին ըզ-
նա»: (Մատ. Գ. 8--11):

Մարդիկ ստութեան կմիտեն նաեւ
իշխանութիւն ձեռք բերելու խոր-
հուրդներումն. եւ որ եւ իցէ իշխա-
նութիւն ձեռք բերելու համար, գրե-
թէ կաստուածացնեն իրենց միջնորդ-
ներն եւ իշխանութիւն տուողներն:
Ստութեան միտելու այս վտանգին
եւս ամենամեծը կներկայանայ Փրկչին,
— Աշխարհիս ամեն թագաւորութիւն-
ներն ու նոցա փառքերն կցուցնէ
սատանան, եւ կխոստանայ. «Զայս
ամենայն քեզ տաց, եթէ անկեալ եր-
կիր պագանիցես ինձ»: Այս փորձան-
քին եւս կյաղթէ Փրկիչը, դարձեալ
Աստուծոյ պատգամն յիշելով. «Տեառն
Աստուծոյ քում՝ երկիր պագցես, եւ
զնա միայն պաշտեսցես» (Բ. Օր. Ժ.
20): Իշխանասիրութեան վտանգն՝

իսպառ անտեղի է մարդկան սրտերում-
մըն, եւ ստուգիւնէ յառաջ կգայ, ե-
թէ մարդիկ ճշմարտութիւնը պահեն,
իշխելու դժուարութիւններն իսպառ
պիտի անհետանան, եւ մարդն իսկա-
պէս իշխան պիտի լինի երկրի բարիք-
ներուն, եւ երջանկութեամբ պիտի
վայելէ. ինչպէս որ աստուածաշուջ
պատգամները կվճռեն:

Ուրեմն՝ ճշմարտութեան ճանա-
պարհներումն ընթանալու համար՝ եւ
ստուգեան փորձանքներէն վերձանե-
լու համար՝ պէտք է հնազանդենք
աստուածաշունչ պատգամներուն, եւ
Փրկչին տուած օրինակին հետեւենք:
Որոյ հետեւանքը կլինի իսկապէս ճշ-
մարիտ ընկերներէ շրջապատուելու
երջանկութիւնն, եւ եթէ պակասին
մարդիկ ճշմարտասիրին շուրջը բո-
ւրելու, Աստուծոյ հրեշտակները
կշրջապատեն, եւ ստուգիւնն իսպառ
կհալածուի, զոր իրօք ցոյց տուաւ

Փրկիչը՝ քարոզելու եւ ուսուցանելու
սկսել է յառաջ:

Այս է Նոր կեանքի իմաստութիւնը,
զոր համառօտիւ կսահմանեն սուրբ
գեղը. — Սկզբն իմաստութեան երկիւղ
տեսաւնը հանձար բարի ամենեցուն՝
որ առնեն զնա: Այս հաւատքն է,
զոր կուսուցանէ Փրկիչն իւր քառաս-
նորեայ ծոմապահութեան վորձու-
թիւններումն: Անպայման հաւատալ
Աստուծոյ ամենակարող զօրութեան
եւ թէ Նա է արարիչ եւ խնամիչ, եւ
պարգեւիչ ամեն բարիքներու՝ որ պէտք
են մեզ: Այս հաւատքէն կախումն
ունի կատարեալ աստուածաիրութիւ-
նըն, եւ նորա սահմաններումն ուղիղ
ընթանալու զգուշաւորութեան երկիւ-
ղըն, եւ որ մարդու հոգին՝ Աստուծոյ
իմաստութեանն հաղորդ անող զօրն է
իսկապէս:

« Եւ իբրև լուաւ Յիսուս, եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ զնաց ի Գալիլեա: Յայնրմհետէ սկսաւ քարոզել Յիսուս և ասել: Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից: Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացոց. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս և զամենայն ախտս ի ժողովրդեանն: Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլեէ և Գեկապօլեայ և յԵրուսաղէ-

ձէ և ի Հրէաստանէ և յայնկոյս Յորդանանու. և բժշկեաց զնոսա»: (Մատ. Գ. 22, 17, 23, 25):

Յովհաննէս Մկրտիչ՝ Աստուծոյ շնորհաց Նոր կեանքի ճանապարհն հարթող կարապետն էր: Նա իւր պաշտօնն աւարտել էր քարոզելով ժողովրդեան ամեն դասակարգին — փարիսեցիին, մարսաւորին, աղնուականին, ռամկին, երկրագործին եւ զինուորին: Հերովդէսի երկրասէր եւ շքնացող բարքն չհանդուրժեց Յովհաննիսի քարոզած արդարութեան եւ սրբութեան, եւ բանդարկեց զՅովհաննէս:

Այս բանտարկութեան համբաւն առաւ Փրկիչն, եւ իսկոյն հասաւ ի Գալիլեայ, եւ շարունակեց Յովհաննէս Մկրտչի հարթած ճանապարհի քարոզն, քառասնօրեայ փորձութիւններու գործնական օրինակն՝ կենդանի

բարբառով ուսուցանելով այն ամեն
ժողովուրդներին՝ որ մահու (աշխարհիս
սպանող իշխանութեան) ստուերնե-
րուն կը նստէին, եւ Մեսիայի դա-
լուն եւ կատարելիք փրկութեանը կը-
սպասէին: Փրկիչը կուսուցանէ, թե
Երկնքի Բարձրագոյն Վարդապետի, եւ
Մարտիրոսի եւ սկիտի վերնայ աշխարհիս
անաստուած թագաւորութեան մոլոր-
թիւնն եւ անարդարութիւնն. Ս.մեն
ճորերն պիտի լեցուին, եւ ամեն լեռ-
ներն ու բլուրներն պիտի խոնարհին,
մարգարէութեան՝ կատարումն տուող
հաւատարութիւնը կըբարոզէր. պարտքի
եւ իրաւունքի հաւասարութիւնն, որոյ
ճանապարհէն՝ կեանքի ճանապարհէն
շեղուել էր աշխարհ, եւ մահու իշ-
խանութեան կծառայէին: Աստուած է
կեանքի տէրն ու իշխանն. կեանք կը-
տայ այն ամեն մարդուն եւ ազգին՝
որ նորա սահմանած պատուիրանները
կպահեն Աստուծոյ թագաւորութեան

հրամայած վաստակը՝ քաղցր է եւ
բեռն՝ թեթեւ:

Կըբլի Փրկիչն ամեն կողմերէն անց-
նելով, եւ ահա ամեն կողմէն կգան
կարօտեալներն, որոնք մահու իշխա-
նութեան արդարացուցած քարոյակա-
նի մի մի տեսակ դառն ճաշակներովն
իրենց կեանքն աղէտներու մատնած
էին, հիւանդներ, ախտաւորներ, աղ-
քատներ, սգաւորներ, կոյրեր, կաղեր,
գօսացածներ, անդամալոյծներ, լուս-
նոտներ, դիւահարներ, որոնք լսե-
լով երկնքի արքայութեան աւետարա-
նը, եւ հաւատալով Աստուծոյ որդ-
ւոյն Օծեալ Փրկիչն, կըժշկուէին,
կեանք կատանային, մահու ճիրանե-
րէն կաղատուէին, հիւանդը կառող-
ջանար, ախտաւորը կսբուէր, կոյրը
կլրասաւորուէր, կաղը կգնար, անդա-
մալոյծը կըկազդուրուէր, խուլը կլսէր,
համբը կխօսէր, սեռելն յարութիւն
կառնուր, աղքատն՝ անկարօտ կլինէր,
քաղցածը կօրանար, սգաւորը կմխի-

Թարուէր, զրկեալն արդարութիւն եւ
իրաւունք կգտնէր, մահացնող իշխա-
նութեան գերին՝ կեանք կժառանգէր
եւ Աստուծոյ շնորհաց որդեգիր կլի-
նէր: Գալիլիոյ շրջակայ գաւառներէն
եւս կգան շատ ժողովուրդներ, երկն-
քի արքայութեան աւետարանի քարոզն
կլսեն, Աստուծոյ ամենազօր ու մըշ-
տընջեանաւոր արքայութեան կհաւա-
տան, նորա ինստացած կեանքի առ-
հաւատչեայն կընդունին, սիրով կըկա-
պուին կսիանան: Եւ Աստուծոյ ար-
քայութեան օրէնքներն ու պատուի-
րաններն ճշգրութեամբ կատարելու
ուխտով կզինուորին, եւ Աստուծոյ ա-
մենազօր տէրութեան հաւատքովն ըս-
պառազինուած՝ մինչեւ ի մահ կքա-
ջալերուին, որ այն արդարութիւնն
արդիւնաւերեն ամեն ազգերու եւ ա-
մեն ժողովուրդներու սրտերումն: Կը-
սրբուին աշխարհիս մոլութիւններէն
ու ախտերէն, եւ կեանքի ճանապարհ-
ներումն համարձակ կգնան: Իսպառ

Թօթ ալիելով իրենց սրտէն խաւարի
իշխանութեան ստութիւններն, եւ
արհամարհելով նորա գործած սպա-
նութիւններն:

Միայն մի հաղորդութիւն է հոգւոյ
Աստուծոյ արքայութեան ուսում.
ինչպէս զլառուած ճրագն իսկոյն կը-
վառուի եթէ վառուած ճրագի լու-
սին մերձեցնես, այնպէս կուսանին
ունկնդիրներն՝ Աստուծոյ աւետա-
րանը: Աստուծոյ արքայութեան օրէն-
քներն ու պատուիրաններն՝ լրասաւոր
կերպով կամիովուին մի համառօտ
հատուածում. — Սիրես քս սեր
Սատռածք՝ բոլոր սրտովդ ոչ հո-
ցչովդ եւ քո ընկերս սիրես քո ան-
ձին սլես —:

«Եւ տեսեալ զժողովուրդսն
 ել ի լիառն, և իբրև նստաւ
 անդ. մատեան առ նա աշա-
 կերտքըն նորա. եւ բացեալ ըզ-
 բերան իւր ուսուցանէր զնոսա-
 և ասէր.

«Երանի՛ աղքատաց հոգւովի
 զի նոցա է արքայութիւն երկ-
 նից: Երանի՛ սգաւորաց, զի նո-
 քա միսիթարեցին: Երանի՛ հե-
 զոց, զի նոքա ժառանգեսցին
 զերկիր: Երանի՛ որ քաղցեալ
 և ծարաւի իցեն արգարու-
 թեան, զի նոքա յագեսցին:
 Երանի՛ ողորմածաց, զի նոքա
 ողորմութիւն գտցին: Երանի՛

այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք,
 զի նոքա զԱստուած տեսցեն:
 Երանի՛ խաղաղարաց, զի նոքա
 որդիք Աստուծոյ կոչեսցին:
 Երանի՛ որ հալածեալ իցեն վա-
 սըն արգարութեան, զի նոցա
 է արքայութիւն երկնից:
 (Մատ. Ե. 1—10):

Աստուծոյ արքայութեան աւետա-
 րանին քարոզը լսելու հետեւող ժողո-
 վրդին պատկերն է այս, զոր համա-
 ոտիւ, բայց միանգամայն եւ լրիւ
 կպատկերացնէ Փրկիչը: Աշակերաները
 կ'կամին աւելի բացայայտ բառբառով
 լսել Աստուծոյ արքայութեան աւե-
 տարանը, եւ փրկիչն այլ եւս կբա-
 նայ իւր բերանն, այսինքն՝ յայտնա-
 պէս կխօսի:

Աշակերները կգարմանային, թէ
 ինչպէս կարող է աղքատն երջանիկ

լինել Աստուծոյ արքայու թեան հա-
ւատալով, քանի որ ոչինչ չունի: Փր-
կինչն՝ աշակերտներուն այս զարման-
քը կհասուցանէ, վճռելով թէ հոգի
ունեցող աղքատն՝ աշխարհի մարտ-
կան աջքին կերեւի իբրեւ ոչինչ չու-
նեցող: Բայց նա՝ Աստուծոյ թագա-
ւորութիւնն ունի, որով եւ ամեն
բան ունի, ըստորում՝ Աստուած՝ այն-
պիսի մի թագաւոր է որ քաղցածին
զօրութիւն կտայ, եւ ցաւ չունեցողին
տրտմութիւն կտայ, այսինքն՝ քաղ-
ցածին դիմացկունութիւն կտայ՝ մին-
չեւ հաց դտնէ, իսկ աշխարհի հա-
րուստին՝ որ հոգս չունի եւ անհոգի
է՝ տրտմութիւն կտայ, հիւանդութիւն
կտայ եւ անմարտութիւն: Աստուծոյ
հոգին ունեցող աղքատն երբ հաց
չգտնէ, բանջար կդտնէ, եւ ախոր-
ժակով կուտէ կանանի, երբ գինի չգտ-
նէ, ջուր կիւմէ, ծարաւն ու պապակը
կանցունէ, կզուարթմանայ, եթէ ջուր
եւս չգտնէ տանը պատրաստ, ա զ

բիւրը կզնայ կամ գետը կիւմէ եւ
կզուարթմանայ: Իսկ անհոգի հարուս-
տըն՝ ասլբանք շատ ունի, ուտելու
ախորժակ չունի, նորա ասլբանքը՝ ծա-
ռաները կուտեն եւ կմարսեն, եւ
ինքը կնախանձի, համեմներ կգործա-
ծէ, որ ախորժակը գուգուրի, բայց
աւելի եւս կիրքերը կգրգուրին, եւ
հիւանդ կլինի, հացն առաջեւն է,
համատամները պատրաստ են, բայց
նա ախորժակ չունի, թէպէտ եւ
քաղցած է: Բայց չէկարող ուտել եւ
այն պատրաստութիւններն՝ եթէ ար-
գելուին ծառաներէն՝ կնետուին ու
դուրս կձգուին, թուչուններու, անա-
սուններու եւ գաղաններու բաժին կը-
լինին, Աղքատն՝ հեծնելու ձի չունի,
եւ ոչ վարելու կառք, բայց՝ անձին
զօրութիւնն ամբողջ ունի, ստքով կը-
զնայ ձիաւորին կհասնի, ախորժակով
կտէտէ կիւմէ, հանդիստ քուն կլինի,
եւ յոգնածութիւնը կանցնի, մինչդեռ
հարուստն հիւանդ է, թէպէտ ձիով

եւ կառքով կճանապարհորդէ, բայց
անհանգիստ է, վասն զի վաստակա-
ւորի քոյն հանգիստը չունի. որուն
վերայ՝ ձիուն, կառքին եւ ծառային
հոգան եւս աւելի: Այսպէս դժբախդ
է աշխարհասէր հարուստն՝ որ Աս-
տուծոյ հոգւոյն հաղորդ լինելու լոյսը
չունի, թէպէտ եւ ամեն բարիքները
սլատրաստ ունենայ եւ շտեմարանած՝
շատ տարիներու համար: Իսկ Աս-
տուծոյ հոգւոյն հաղորդակցութեան
լոյսն ունեցող աղքատը՝ թէպէտ ոչ
մի բարիք չունենայ սլատրաստ, եւ
խապառ զուրկ երեւի աշխարհասիրի
աչքին. սակայն երջանիկ է՝ ըստ ու-
րում ամեն վայելչութիւն կվայելէ
իւր ժամանակին, կլիշտանայ քաղցա-
ծութեան դէպքում՝ մինչեւ իսկ ցա-
մաք հացով կամ քարդուով, կհանգ-
չի յոգնութենէն մինչեւ իսկ քարէ
բարձում, եւ կուրախանայ, կմխի-
թարուի տրտմութենէն, վասն զի
հանդերձեալ կեանքի՝ յաւիտենական

կեանքի յոյսն ունի հասաւտուն հա-
ւատքով:

Սիեւնոյն երանութիւնը կտայ Փր-
կիչը նա եւ հոգի ունեցող սգաւո-
րին. այն սգաւորին՝ որոյ տան ժա-
ռանգներէն մին կամ միւսն մահա-
ցուցել է մահու իշխանը: Այն սգա-
ւորն՝ որոյ հոգին հաղորդ է Աստու-
ծոյ հոգւոյն, եւ յաւիտենական
կեանքի յուսովն Աստուծոյ արքայու-
թենէն հովանաւորուած է, նա գի-
տէ, թէ մահու իշխանը կմեռցնէ մի-
այն մարմինը, կյարուցանէ Աստուած
անմահարարն, եւ յաւիտենական ար-
քայութեան մէջ կընդունի իբրեւ ժա-
ռանգ: Այս սգաւոր հոգին կմխի-
թարուի եւ նոյն իսկ մահն իւր ա-
ռաջն ունեցած միջոցին, եւ երբէք
չխտորիք Աստուծոյ սահմանաց
կիանքի ճանապարհէն, կթաղէ իւր
մեռեալն՝ Աստուծոյ վճռին հնազան-
դելով. եւ կմխիթարուի իւր սլարտ-
քը կատարելով: Թէ հոգւոյլ աղքա-

տն եւ թէ սգաւորն՝ Աստուծոյ հոգւոյն հաղորդ եղող լըսաւորութիւնումն՝ մի են եւ հաւասար, որոց երկուքն եւս իրենց երջանկութեան թերին լմնցած կղզան Աստուծոյ արքայական խումբի ամենազօր զօրութեամբն: Հետեւապար եւ երանելի են:

Միեւնոյն երանին կկարդայ Փրկիչը նա եւ հեղերուն, եւ այս երանին կբացատրէ, թէ նոքա սլիտի ժառանգին երկիրը: Այսինքն՝ թէ հեղերն իսկապէս աստուծոյ սահմանած մարդկային յատուկ բարոյականի շաւղիներումն անխոտոր կզնան, որով եւ երկրի տէրը պիտի լինին, ինչպէս որ իսկզբանէ վճռել է Աստուած նախաստեղծ մարդուն օրհնութեանը մէջ. «Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիր եւ տիրեցէք դմա»:

Աստուծոյ այս օրհնութիւնն արդեամբք պիտի կատարուի հեղերուն վերայ, նոքա իրենց հեղութեամբն՝

իրենց եղբայրներէն կսիրուին, եւ կսիրեն փոխադարձ երախտագիտութեամբ, եւ որովհետեւ կսիրեն իրենց ընկերներն, ուրեմն թէ կօգնեն նոցա, եւ թէ կզգուշանան որ եւ իցէ վնաս հասցնելէ նոցա: Այսպէս նոցա կեանքի ժամերը կանցնին միայն այնպիսի ջանքերում, որովք եռանդուն սիրով կջանան ճշտութեամբ կատարել իրենց պարտքն առանց որ եւ իցէ փոքրիկ զանցառութեան, եւ այս ջանքն է նոցա զբօսանքն ու զուրծախառն բերկրանքն, եւ այս զուարճակի զբօսանքներում կգործին երկիրը ճշմարիտ վաստակասիրի անխոնջ արիւթեամբ, եւ կլիանան ու կառաւելուն աստուծոյ սլարգեւած բարիքներով թէ կալէն, թէ հնձանէն, եւ թէ փարսխէն, թաթաղուն զեղուն եւ շարժուն չափով կչափեն իրենց նուէրն ընկերսիրութեան զոհաբերութիւններումն, մինչեւ անգամ անասունին կողորմին առանց ինայե-

ըլ: Իսկ ամբարիշտները կպատերազմին եւ մէկզմէկ կկոտորեն մյն ազահոլթեան մտքով՝ որ երկրի բարիքները միայնակ վայելեն, եւ սոցա կոտորածն ինչքան տարածուի երկու կողմն, այնքան աւելի կթառամնգին հեղեր նաեւ նոցա ձեռք եղած երկիրներն: Այս է հեզերուն ժառանգութիւնն, որ իսկական բարեվայելչութիւն է այս աշխարհում:

Ամեն հեզահոգի մարդ՝ աստուծոյ հոգւոյն հաղորդ է, վասն որոյ եւ անսայթաք կզնայ մարդկային կեանքի ուղիղ բարոյականումն, եւ ուղղութիւն ու արդարութիւն կսիրէ, եւ կգործէ:

Երանի կկարգայ փրկիչը նաեւ արդարասէրներուն, որ անարդարներու մէջ բնակելով երբէք արդարութիւն չեն տեսներ, եւ դրէ թէ քաղցածութիւն մի եւ ծարաւ կզգան, այս քաղցն ու ծարաւն՝ այն արդար

արտմտութիւնն է, զոր սաղմոսներն կբացատրեն. «Ահա մեղաւորք են եւ յաջողեալ է նոցա, կան եւ ունին դմեծութիւն աշխարհի» զոր կտրտմտին անարդարներուն վերայ, ողջ հակառակ արդարութեան կգործեն եւ կտիրեն աշխարհի մեծութեան: Այս արդարասէրներուն կերանէ փրկիչը. խոստանալով թէ պիտի յազնան իրենց քաղցն եւ ծարաւն, այսինքն՝ թէ Աստուած պիտի յայտնէ իւր թագաւորութիւնն ու արդարութիւնն, եւ անարդարները պիտի չքանան, կամ արդարութեան առաջ պիտի խոնարհին եւ դառնան, որով եւ պիտի կատարուի սաղմոսներու մարդարէութեան եւ այն մասն, որ արդարասէրներու սրտմտութեան յազուրդը կգուշակէ ասելով. «Սակայն վասն նենգութեան նոցա տարազիւր արասցես զնոսա, կործանեսցես զնոսա յամբարտաւանութեան իւրեանց, իսկ զիմրդ եղեն յաւեր յանկարծա

կի, սատակեցան սրահասեցան կորեան
վասն անօրէնութեան իւեանց, եւ
եղեն որպէս երօզք զարթուցելոց ։
Ստուծոյ այս արդարութիւն ընդ-
հանուր կերպով պիտի կատարուի,
որոյ կատարածն՝ այսպէս զարմանալի
կգուշակէ Նասայի մարգարէն. «Սհա-
ւադիկ ի միտ առցէ մանսկ իմ՝ վե-
րասցի եւ բարձրօսցի եւ փառաւո-
րեսցի յոյժ ։ Զորօրինակ զարմասցին
բազումք ի վերայ քո՝ մյնպէս ան-
շքեսցի տեսիլ քո ի մարդկանէ, եւ
փանք քո՝ յորդոց ի մարդկանէ ։
Այնպէս զարմասցին ազգք բազումք
ի վերայ քո, եւ կարկեսցեն թագա-
ւորք զբերանս իւրեանց, զի որոց ոչ
պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, եւ
որոց չիցէ լուեալ՝ ի միտ առցեն ։»

(Եսայ) . Ժբ . 13—15

Երանի կկարդայ Փրկիչը նաեւ ողոր-
մածներուն, վասն զի նաքա ողորմու-
թիւն պիտի գտնեն : Երկնաւոր հայրն
Աստուած՝ ինքը գլխած է եւ ողոր-

մած . եւ ընդհանուր կտարածէ
իւր գլխութիւնն ու ողորմութիւնը .
Ողորմածութիւն սիրող մարդն՝ հողուով
հաղորդ է աստուծոյ հողււյն, եւ
նորա ողորմութիւնը կտեսնէ մըշտ .
Ողորմածութիւն՝ ընկերսիրութեանն
պարտքին գլխաւոր մասն է, զոր
կպահանջէ աստուած ամեն մարդէն
իբրեւ իւր անհուն ողորմութեանը զոր
կողորմիհամապազ՝ մի փոխարկնութիւն .

Երանի կկարդայ Փրկիչը նա եւ այն
կարգ մի մարդկան, որ սրտով սուրբ
են, վասն զի նաքա պիտի տեսնեն զԱս-
տուած, Աստուած մարդացել էր, որ
տեսնուէր ամենքին, բայց պիտի տեսնե-
միայն նոքա, որ սուրբ սիրտ ունին,
այսինքն՝ Աստուծոյ սահմանած ճա-
նապարհներումը գնալ կխորհին, եւ
չեն սիրեր այն հակառակ ցանկութիւն-
ները՝ զորս աշխարհասէրներու սրտում
բնաւորեցուցել է ստութեան հայրը
սատանան : Աստուածաշունչ սատգամ-
ները կյայտնեն նաեւ թէ՛ Սուրբ սիրտ

ունեցող խոնարհներու մէջ կընակե
Աստուած: Այսպիսիներն՝ Աստուծոյ
Քրիստոսը պիտի ճանչնան՝ նորա խօս-
քէն եւ արդարութիւնէն: Սրտով սուրբ
եղող մարդիկն առ հասարակ Աստու-
ծոյ հոգւոյն հաղորդ են, եւ նորա
օրէնքները կպահեն ճշտութեամբ, եւ
աշխարհի օրէնքներու տակ չեն ճըն-
շուկի, ըստորում ոչ վեճ ունին եւ ոչ
հակառակութիւն, եւ ոչ դատաստան-
ներու կմտնուին: վասնորոյ եւ այս
աշխարհում եւս երանելի են:

Երանի կկարգայ Փրկիչը նաեւ խա-
ղաղարարներուն, վասն զի նոքա՝ Աս-
տուծոյ որդիք (Ժողովուրդ) պիտի կոչ-
ուին: Խաղաղութիւն սիրող հոգին՝
ինքն իւր կողմէն երբէք տեղի չտար,
որ մարդկան խաղաղութիւնը վրդովի-
եւ ընկերներուն մէջ պատահած վրդ-
ուովումներն եւս խաղաղեցնելու կը-
հետեւի. այսպիսիներն՝ Աստուծոյ ար-
քայութեան որդիքն են, եւ նորա
կամբը պիտի յաջողեցնեն մարդկան մէջ:

Երանի կկարգայ Փրկիչը նաեւ այն
արդարասէրներուն որ արդարու-
թեան համար հալածուած են աշ-
խարհիս խաւարային իշխանութիւնէն:
Այս երանելիներու կարգումն են
նաեւ հոգւով աղքատներն ու սղա-
ւորներն. որոց աղքատութիւնն ու
սուգն եւս խաւարի իշխանութեանն
պատճառած է:

Այսպէս կպատկերացնէ Փրկիչն իւր
քարոզած նոր կեանքն. յորում կը-
տեսնենք, որ Աստուծոյ հոգին մար-
դու սիրտը կսրբէ, խորհուրդն ու
գործը կարգարացնէ, եւ հոգին՝ Աս-
տուծոյ հոգւոյն հաղորդ կանէ. եւ
այնպէս կլուսաւորէ, որ խաւարի չը-
տեսածներն կտեսնէ: Այս նոր կեան-
քի փառքն՝ հոգւով միայն կտես-
նուի, որ անտեսանելի է մարմնա-
սէր ցանկասէր մարդկան աչքին: Յան-
կասիրի տեսած փառքն՝ արծաթի եւ
ոսկւոյ բազմութիւնն է եւ հանդերձ-

ներու ճոխութիւնն, որոց տակ ծածկուած սիրտն՝ տեղութեան եւ նենգութեան կրքերէ կբորբորի, ինչպէս մի կաթսայ՝ կրակի մէջ կեռայ: Մինչդեռ Աստուծոյ հոգւոյն հաղորդ եղող երանելին՝ աղքատ է հանդերձներով: բայց խաղաղ է սրտով, նոյնպէս սգաւորը թէպէտ տրտմած է կորուստին վերայ, այլ միանգամայն եւ մխիթարուած է, վասն զի կհաւատայ հանդերձեալ կեանքի անմահ յաւիտենականութեան: Փրկչին երանած հոգիներն, այսինքն՝ հեղերն, ողորմածները, սուրբ սիրտ ունեցողները, խաղաղարարներն. եւ արդարութեան համար քաղց եւ ծարաւ զգացողներն ու հալածուածներն՝ ամենքն եւս խաղաղ հոգի ունին. եւ անդորր սիրտ. նոքա իրենց պարտքն առանց զանցաւորութեան կատարել են:

Ե.

«Երանի է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն» և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: ցնծացէք և ուրախ լերուք. զի վարձք ձեր բազումնն յերկինս. զի այսպէս հալածեցին զմարդարէսն որ յառաջ քան զձեզ էին: Գուք էք աղ երկրի, եթէ աղն անհամի իւր յաղիցի. ոչ իմիք ազգիցէ անուհետև. բայց եթէ ընկենուլ արտաքս և կոխան լինել ի մարդկանէ: Գուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել, որ ի վերայ լերին կայցէ. եւ ոչ լուցանեն ճրագ. և

դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի, և լոյս տայ ամենեցուն որ ի տանն իցեն: Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր, որ յերկինս է»: (Մատ. Ե. 11—16):

Այս պարբերութեամբ՝ նախընթաց երանութիւնները կողողէ աշակերտներուն, որ պիտի հալածուին, նախատուին եւ զրպարտուին փրկչին քարողած այս նոր կեանքն ընդունելուն համար, մանաւանդ երբ սկսին ուսուցանել աշխարհի բոլոր ազգերի դաւակներուն: Այնժամանակն աղքատ պիտի լինին աշակերտներն, ինչք եւ ստացուածք պիտի չունենան, բայց Աստուծոյ հոգւոյն հաղորդ են, եւ Աստուծոյ պարգեւներն ունին լիով:

Թեամբ, ինչքան որ տան ուրիշին, այնքան եւս ունին: Բժշկութիւն ունին, որ կեանք կտայ մահու ակրնկալողներուն, լոյս ունին՝ որ իմաստութիւն կտայ մահու մութ ստուերներումը փառք փնտռողներուն, իմաստութիւն՝ որով մարդկան շրտին խորքերը կըննեն, եւ տիեզերքի բարձրութեան, լայնութեան ու խորութեան ծածուկները կըիտեն, աղ ունեն, որ մարմնական կիրքերու անհամութիւնները կհամեմեն, Սգաւոր պիտի լինին երբ տեսնեն, որ իրենց ընկերն սպանուած է խաւարի իշխանութեան դատաստանումն, այլ պիտի մտիթարուին, տեսնելով որ սպանուած մի ընկերին փոխանակ՝ երկուքն երեքն եւ շատերն աւելացել են, Չարաչար պիտի հալածուին աշխարհիս կեղծաւորներէն, որ ուժգին կերպով պիտի զգան արդարութեան քաղց եւ ծարաւ, եւ պիտի յաղենան, տեսնելով, որ արդարութեան

առաջ կխոնարհին ամեն ազգերը մին-
ջեւ իսկ աստուածամագէտ հեթանոս-
ները: Հեզ պիտի լինին, ըստ որում
Նոր Կեսարի սկզբունքն է Չարին չար
չհատուցանել եւ զուր տեղը ջբար-
կանալ, այլ սրտանց պիտի շնորհեն
անագէտ ընկերին յանցանքն: Ողորմած
պիտի լինին, ըստ որում ձրի առին,
եւ ձրի պիտի տան, իրենց հայրենի
ստացուածքներն եւս պիտի վաճառեն
եւ հասարակաց կարօտութիւնը վեր-
ցնեն: Սուրբ սիրտ պիտի ունենան,
ըստ որում չունին հպարտութիւն եւ
նախանձ եւ որ եւ է մահաբեր կիրք,
որ ներքին մարդն աղտեղացնէ նոցա
մէջ, նոցա սիրտը գտուած է Աստու-
ծոյ հրովը: Կօրհներն իրենց հաւա-
ծիչը, կսիրեն իրենց թշնամին: Խա-
ղաղաբար պիտի լինին, վասն զի նոցա
գանձերն երկնքումն են, ոչ գողերէ
կասկած ունին, եւ ոչ յափշտակիչնե-
րէ: Արդարութեան համար պիտի հա-
լածուին, վասն զի պիտի յանդիմանեն

չարին խաւարային գործերն երբ եւ
վերայ հասնեն, ուր եւ պատահեն,
վասն զի Աստուծոյ հոգին աջաւել
չունի: Ամեն հալածանքում ինքզինք-
նին երջանիկ պիտի դգան, ըստ որում
Աստուծոյ խօսքն առանց հալածանքի
չտարածուիր: վասն զի աշխարհիս
խաւարային իշխանութիւնը լոյս չսի-
րէր, եւ լոյսն հալածելով միայն պի-
տի մերկանայ իւր ներքին խաբէու-
թիւնն: Այսպէս հալածեց էին նաեւ
մարգարէներն՝ որ փրկչին խրկելու
առաքեալներէն յառաջ եկած էին,
եւ Աստուծոյ հոգւովը լեցուած
խաւարի գործերը կյանդիմանէին:

Փրկչին աշակերտները մարդկան
ազգերու աղն են, ինչպէս աղը կը-
լլածուի եւ կերակուրին հետ կզան-
գուի, այնպէս պիտի հալածուին
աշակերտներն եւ ամեն ազգերու
մէջ ցրուին, նախատուեն, չարչար-
ուին, ճշմարտութիւնը խօսին, լու-
ցնեն եւ հաստատեն, եւ իրենց

վկայութեան վերայ մեռնեն. որպէս
զի միանգամ հետաքրքրուին տես-
նողներն ու լսողներն, եւ ճշմարտու-
թեան լուսոյ նշույլը միանգամ թափ-
անցնի նոցա սիրան ու միաքն. Եթէ
փախչին այս հալածանքէն եւ այս
աղային լուծման նմանութիւնն ունե-
ցող մահէն, իրենց առաքելութիւնն
անպտուղ կ'մնայ՝ ինչպէս անհամա-
ցած աղն: Առաքեալները՝ Նոր կեան-
քի աղն են. որուն ճաշակը պիտի
տան ամեն ազգերու եւ ժողովուրդ-
ներու զաւակներուն՝ անխտիր. որ
միանգամ ճաշակելէ ետքն այլ եւս
իրենց ունեցած ամեն գանձերը պի-
տի վաճառեն, եւ զայն գնեն:

Առաքեալներն՝ աշխարհի լոյսը պի-
տի լինին. եւ մարդկան հոգին ու
աչքը պիտի լուսաւորեն, որ տեսնեն
Աստուծոյ գործն, Աստուծոյ պատ-
կերին (մարդուն) անմահ փառքն, եւ
նորան հետեւեն: Այս եւս պիտի կա-

տարուի հալածանքով: Թէպէտ եւ
ջանան առաքեալներն, որ հալածիչ-
ներէն զերծանին, բայց ի վերջոյ պի-
տի վկայեն արիւնով: Ինչպէս սր լի-
ւան գլխումն հիմնուած քաղաքը
չէ կարող աներեւոյթ մնալ. այնպէս
պիտի յայտնուին առաքեալները, եւ
բռնուին. եւ խոշտայնուին: Բայց
խաւարի իշխանութիւնը պիտի հար-
ցաքննէ Աստուծոյ առաքեալներն.
որպէս զի նոցա վերայ մի չարիք
գտնէ, եւ պատճառ ունենայ իւր
սպանութիւնը կատարելու, բայց պի-
տի շիտի ղատաւորն, երբ տեսնէ,
թէ նոցա գործերը բարի են. կսիրեն
իրենց ընկերը. կօգնեն թշուառին,
կը բժշկեն հիւանդները, իրենց աս-
տուածապաշտութեան աղօթքներումն
անխափան կյաճախեն. մինչեւ ան-
գամ կուսալաշտ ժողովրդեան նե-
ղեալներին կհասնեն օգնելու. եւ ոչ
մի վնաս չեն գործեր եւ ոչ ոքի.
բայց միայն կուռքերը չեն պաշտեր:

միայն Աստուծոյ Հօր եւ Փրկչին
անունը կուսուցանեն, եւ նորա անու-
նովն սքանչելիքներ կգործեն.
մինչեւ ժողովրդական մեծ բազմու-
թիւններ կհասատան, եւ խաւարի
իշխանն իսկ՝ իւր գործակից դատա-
ւորներովը միասին կզարմանան, կը-
կարկին կպասպանձին. ըստ որում դի-
տեն, թէ կուռքերն՝ աստուած չեն,
այլ աստուածացուցել են իրենք, որ-
պէս զի նոցա հետ՝ խաւարի իշխա-
նին արձանն եւս պաշտուի, եւ մար-
դիկ խաբուին, ու իբրեւ Աստուծոյ
երկրպագեն նորան, եւ նորա գոր-
ծած մահերէն վախնան: Առաքեալ-
ներու հալածանքն ու հարցախորձն՝
այսպէս պիտի պատկերացնէ բոլոր
ազգերու աչքին՝ Հին կեանքի չարու-
թիւններն, եւ Քրիստոսի ուսուցած
Նոր կեանքի բախիքներն, եւ ամեն
տեսնող՝ փառք պիտի տայ միոյն
Աստուծոյ երկնաւոր Հօր:

Բ.

«Մի համարիք՝ եթէ եկի
լուծանել զօրէնս կամ զմար-
գարէս. ո՛չ եկի լուծանել. այլ՝
լնուլ: Ամէն ասեմ ձեզ. մինչև
անցեն երկինք և երկիր. յովտ
մի՛ որ նշանախեց մի է՝ ոչ անց-
ցէ յօրինացն և ի մարգարէից,
մինչև ամենայն եղիցի: Որ որ
լուծցէ մի ինչ ի պատուիրանացս
յայսցանէ ի փոքունց և ուսուս-
ցէ այնպէս զմարդիկ. փոքր կո-
չեսցի յարքայութեան երկնից:
Իսկ որ արասցէ և ուսուսցէ,
նա մեծ կոչեսցի յարքայու-
թեան երկնից: Բայց ասեմ
ձեզ. զի եթէ ոչ առաւելուցու

արդարու թիւն ձեր առաւել քան
զբարացն և զՓարիսեցւոց, ոչ
մտանիցէք յարքայութիւն երկ-
նից: (Մատ. Ե. 17—20):

Փրկչին պատուիրած Նոր կեանքի
պատկերն՝ աշակերտաց այնպէս երե-
ւեցել էր, թէ բոլորովին օտար է
օրէնքէն եւ մարգարէներէն. ըստ
որում օրէնքը կ'պատուիրէր, որ հայ-
րենի ժառանգութիւնն (կալուածքն)
ձեռքէ չհանեն. իսկ Նոր կեանքն՝ ե-
րանելի կհամարի աղքատութիւնը:
Օրէնքը կ'պատուիրէր, որ չնչին թըշ-
նամի հարեւանն, եւ անճետ անեն.
Իսկ Նոր կեանքն՝ երանելի կհամարի
սգաւորը: Օրէնքը կ'պատուիրէր, որ
վնասապարտին փոխարինեն նոյն չա-
փով նորան վնասելով. իսկ Նոր
կեանքը կ'պատուիրէ Չարին հակառակ
չկենայլ, այլ մանաւանդ բարիք անե-
լով փոխարինել սիրել թշնամին, օրհ-

նել անիծանողն, եւ աղօթք անել
հալածողներուն եւ չարչարողներուն
վերայ, Հին օրէնքի եւ Նոր կեանքի
պատկերներուն այս զանազանութիւնն
տեսնելով, եւ նոցա ոգւոյն եւ նշա-
նակութեան (պատճառին եւ նպատա-
կին) նոյնութիւնը չկարողանալով նըշ-
մարել, կկարծէին. թէ օրէնքներն ու
մարգարէներն կլուծուին, այսինքն
կոչնչանան. մինչդեռ մարգարէներու
միջոցաւն յայտնուած աստուածա-
շունչ պատգամներն՝ Հին Օրէնքի եւ
Նոր կեանքի մէջտեղումն մի զօր էին,
եւ կգուշակէին, թէ Նոր կեանքը՝ զոր
պիտի տայ Աստուծոյ Օծելան՝ Օրէն-
քին ոգին է եւ կատարելութիւնն:

Փրկչին աշակերտներուն այս տարա-
կոյսը կիբարատէ, վճռելով, թէ Նոր
կեանքը կըբուրի՝ ոչ որպէս զի Օրէնքն
ու Մարգարէներն լուծուին, այլ՝ որ-
պէս զի լրանան, լրումն առնուն. Եւ
ըստ այնմ՝ կըբարի. թէ Մի աշակերտ՝
որ Օրէնքի եւ Մարգարէներու պա-

տուհրաններէն մի փոքրիկն լուծէ, եւ այնպէս ուսուցանէ, նա՛ փոքր պիտի կոչուի երկնքի արքայութեան մէջ. իսկ այն աշակերտն որ օրէնքի եւ Մարգարէներու յայտնած պատուհրաններն լրիւ կկատարէ, եւ այնպէս կուսուցանէ, նա՛ մեծ պիտի կոչուի երկնքի արքայութեան մէջ: Իսկ այն երեւոյթն՝ որ կերեւի Նոր կեանքի պատկերումն՝ իբրեւ թէ Օրէնքն ու մարգարէներն կլուծուին, այն երեւոյթն՝ նոր կեանքի առաքեալներուն կատարելք արդարութեան առաւելը թիւնն է, եւ զոր Օրէնքէն եւ Մարգարէներէն կբղխեցնէ Փրկիչն, այս արդարութիւնն՝ շատ առաւել է փարիսեցիներուն կատարած եւ պահանջած արգարութենէն, զոր նորա եւս Օրէնքէն եւ Մարգարէներէն կհանէին: Փրկիչն՝ Օրէնքի եւ Մարգարէներու հոգիէն կառնու իւր պատուիրած առաւելը թիւնն, իսկ փարիսեցիք՝ Օրէնքի բաւերէն միայն կառնէին, եւ Օրէնքի

ողին՝ բուն նշանակութեանն ուշագրութիւն չէին դարձներ:

Թ.

« Լուարուք, զի ասացաւ առաջնոցն. թէ «Մի սպանաներ, զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի»: Այլ ես ասեմ՝ ձեզ. եթէ Ամենայն որ բարկանայ եղբոր իւրում՝ դարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի: Եւ որ ասիցէ ցեղբայր իւր՝ յիմար, պարտաւոր լիցի ատենի: Եւ որ ասիցէ ցեղբայր իւր՝ մորոս, պարտաւոր լիցի ի գեհէն հրոյն:

«Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ՝

և անդ յիշեցես եթէ եղբայր
քո ունիցի ինչ խէթ զքէն. թո՛ղ
զպատարագն քո առաջի սեղա-
նոյն, և երթ նախ հաշտեաց
ընդ եղբօր քում: Լապա եկ-
եալ մատուցիր զպատարագն
քո:

«Լեր իրաւախօհ ընդ ոսոխի
քում վաղագոյն, մինչդեռ իցես
ընդ նմա ի ճանապարհի. գուցէ
մատնիցէ զքեզ ոսոխն դատաւո-
րի, և դատաւորն՝ դահճի, և
արկանիցես ի բանտ: Ամէն ա-
սեմ քեզ. ո՛չ ելանիցես անտի,
մինչև հատուցանիցես զյետին
նաքարակիտն»: (Մատ. Ե. 21—
26):

Փրկիչն հաստատապէս վճռեց նա-
խընթաց գլխում: Թէ նոր կեսն քի

պատուէրներն՝ Օրէնքի պատուէրնե-
րուն լրումն են. եւ այս պարբերու-
թիւնումն աւելի մեկին կերպով ցոյց
կտայ, չին եւ նոր պատուէրները
կողք կողքի դնելովը յորում մէկ
նայուածքով տեսանելի կլինի, թէ քնչ-
պէս լրումն կառնուն օրէնքի պա-
տուէրներն:

Ա. Օրէնքի պատուէրն: «Մի սպա-
ներ, վասն զի սպանողն՝ դատաս-
տաստանի պարտական է»:

Ա. Նոր կեսն քի պատուէրն. «Զուր
տեղը մի բարկանար եղբօրդ.
վասն զի դատաստանի պարտա-
ւոր կլինիս»:

Համեմատութիւն. Օրէնքի պատուէ-
րն՝ սպանութիւնը կարգելէ. Նոր
կեսնքի պատուէրն՝ եղբօր վերայ զուր
տեղը բարկանալն՝ յիմար կամ մորոս՝
ասելը կարգելէ: Ամեն սպանութիւն՝
բարկանալէն յառաջ կգայ, եւ միշտ՝
զուր տեղը բարկանալէ: Ուրեմն այս

պատուէրն պահելու համար զգուշացողն՝ զգուշացած կլինի եւ սպանութիւն դուրծելէ, մինչդեռ առանց այս զգուշութեան կարելի չէ զգուշանալ սպանութիւն դուրծելէ: Այսպէս նոր կեանքի պատուերն պահողը՝ լրական կերպով պահած կլինի եւ օրէնքի սպտուէրը:

Այս պատուէրի զանազան հանգամանքներն եւս կարգէ. յայտնելով աշակերտներուն, թէ Աստուծոյ ընծայ մատուցանողն, նախ պիտի հաշտուի եղբօրը հետ, եւ սպա պիտի մատուցանէ իւր ընծայն, ասլա թէ ոչ իբրեւ սպանողի ընծայ՝ անընդունելի է Աստուծոյ: Մինչեւ անգամ թրաւացի կերպով բարկացողին կպատուիրէ, որ զգուշանայ դատաստանի մատնուելէ, այս զգուշաւորութիւնը՝ դատաստանի տուգանքէն կազատէ բարկացած եղբայրն, իսկ եթէ բարկացողն չհաշտուի ոսոխին հետ, եւ դատաստանի գնան, պիտի տուգանուի մինչեւ վեր-

ջին նաքարակիան: Օրէնքն այս տուգանքը սահմանել էս՝ այն մտքով, որ վնասողներն՝ կրկնապատիկ տուգանքէն վախնան, եւ իրենց եղբօրը վնասելէ զգուշանան: Փրկիչը կպատուիրէ որ հաշտուի ոսոխին հետ, եւ ազատուի դատաստանի տուգանքէն, որով կուսուցանէ նոյն իսկ օրէնքի ոգին, որ է վնասել եղբօրը կամ ընկերին: Դատաստանը կտուգանէ վնասողն, իսկ հաշտութիւնն՝ վնասը կղարձնէ, եւ վնասապարտն կազատէ տուգանքէն, եւ ըստ այսմ աւելի եւս արդարութիւն կկատարուի:

Ժ.

«Լուարուք» զի ասացաւ առաջնոցն. Մի շնար: Բայց ես ասեմ ձեզ. թէ Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցան-

կանալոյ նմա, անդէն շնացաւ
ընդ նմա ի սրտի իւրում: Եթէ
ակն քո աջ գայթակղեցուցանէ
զքեզ՝ խլեա զնա, և ընկեա
ի քէն. զի լաւ է քեզ, եթէ մի
յանդամոց քոց կորիցէ, և մի
ամենայն մարմինդ քո անկանի-
ցի ի գեհնն: Եւ եթէ աջ ձե-
ռըն քո գայթակղեցուցանէ ըզ-
քեզ, հատ զնա, և ընկեա ի
քէն. զի լաւ է քեզ, եթէ մի
յանդամոց քոց կորիցէ, և մի
ամենայն մարմինդ քո արկանիցի
ի գեհնն»: (Մատ. Ե. 27—30):

Բ. Սրբեքի պատռերն: «Մի շնար»
Բ. Նոր կեանքի պատռերն: «Յան-
կութեան աչքով մի նայիր կին մար-
դու վերայ»:

Շնութեան բռն պատճառն է աչ-

քի տեսութեանն կամ ձեռքի 202ա-
փումէն գրգռուած ցանկութիւնն: «Փր-
կիչն՝ այս ցանկութեան գրգիռն կար-
գեւէ, որով եւ շնութիւնն իսպառ
արգելուած կլինի»:

ԺԱ.

«Ապաքէն ասացաւ. եթէ որ
արձակեցէ զկին իւր, տացէ նը-
մա զարձակման: «Բայց ես ասեմ
ձեզ, եթէ ամենայն որ արձա-
կէ զկին իւր առանց բանի պող-
նկութեան, նա տայ նմա շնալ,
և որ զարձակեալն առնէ՝ շնայ»:
(Մատ. Ե. 31—32):

Մովսէս վասն խստասրտու-
թեան ձերոյ հրամայեաց ձեզ
արձակել զկանայս ձեր, այլ իս-

կղբանէ ո՛չ եղև այնպէս » :
(Մատ. Թ. 8)

Այլ ի սկզբանէ արարածոց՝
արու և էգ արար զնոսա Աս-
տուած, և ասէ. վասն այսորիկ
թողցէ այր զչայր իւր և զմայր
և երթիցէ զհետ կնոջ իւրոյ.
և եղիցին երկուքն ի մարմին
մի: Արդ՝ զոր Աստուած զու-
գեաց, մարդ մի՛ մեկնեացէ:.....
Եթէ այր արձակեացէ զկին իւր,
և արացէ այլ շնայ, եւ կին՝
եթէ ելցէ յառնէ իւրմէ, և
եղիցի առն այլում՝ շնայ » :
(Մատ. Թ. 6—12):

Երիտասարդի եւ կուսի (չափահաս-
ներուն) զուգութիւն օրհնեց Աս-
տուած ի սկզբանէ, որ զաւակ սերեն:

Զաւակասեր զուգութիւնն՝ այլ եւս
աչքի եւ շօշափման զգացումներէն
գրգուռելու տեղիք չունի, եթէ Աս-
տուծոյ օրհնած ճանապարհումն ա-
ճելու սկսեն, ըստ որում՝ այլ եւս
այրութեան եւ սերմնաուղթեան գըր-
դիուն ու եռումն հանդարտած կլի-
նի ըստ բնական սահմանին, իսկ եթէ
մէկն չժուժկալէր մինչեւ երիտա-
սարդութեան չափահասութիւնը կամ
մինչեւ կատարեալ արբունքն, եւ
զուգութեան օրհնութիւնն ըստ օրի-
նի չընդունած կգրգուռի նայելով
կամ շօշափելով, նա կորսնցուցել է
Աստուծոյ օրհնութիւնն՝ զոր օրհնեաց
աճելութեան համար, Այսպիսի մար-
դիկն՝ աւելի լաւ կանեն, կանուխէն
յամձն առնուն կորսնցնել իրենց մի
կամ միւս անդամն, աջ աչքն կամ
աջ ձեռքն, քան թէ յետոյ գեհնի
գատաստանին բռնուին:

Աստուծոյ սահմանած զուակասեր
աճելութեան օրհնութիւնովն միա-

ցած ամուսիններն՝ անբաժանելի զուգուած են զաւակ սերելու համար, կին արձակելն՝ շնացողութեան խորհրդի եւ ցանկութեան հետեւանքն է միայն, եթէ ամուսիններէն մէկն՝ սուղնկութիւնով լըծեւ է Ստոլծոյ օրհնած զուգութիւնը, նա՛ արդէն իսկ արձակուած է եւ շնացող այսպիսի շնացողի մը հետ՝ եթէ մի ուրիշն ամուսնանայ, նա եւս շնացող է ըստ որում Ստոլծոյ օրհնած անբաժանելի զուգութեան սրբութիւնն չունի:

Գ. Օճերքի պատուէրն. « Եթէ մէկն արձակելու լինի իւր կինը, թող արձակման թուղթ տայ նորան »:

Գ. Նոր կեանքի պատուէրն. « Եթէ մի մարդ արձակէ իւր կինն, եւ ուրիշն անէ կին, շնացել է: Եթէ մի կին բաժանուի իւր այրէն եւ ուրիշին լինի, շնացող է »: Եթէ մէկն՝ ամուսնութենէ արձակուածին հետ ամուսնանայ, շնացող է »:

Օրէնքի այս սլատուէրն՝ որ արարչութեան սկզբէն սահմանուած աստուածադիր սլատուէրին հակառակ է, թոյլատրուած է այն նպատակով, որ արձակուած կնոջ հետ ամուսնացող մարդուն դէմ՝ վրէժխնդրութիւն չըխորհի նախորդ ամուսինն: Իսկ նոր կեանքի պատուէրն՝ արարչագործութեան սկիզբէն սահմանուած աստուածադիր օրէնքն է իսկապէս. եւ կհաստատէ Ստոլծոյ օրհնութեան զուգութիւնն անբաժանելի կապած ունենալ մինչեւ ի մահ: Նոր կեանքի այս օրէնքին զուշնացող ամուսիններն իսպառ ազատ կլինին որ եւ իցէ խտասրտութենէ, մանաւանդ՝ եթէ ցանկութեան աչքով նայելէ զգուշաւորութիւնն՝ ճշտիւ պահպանեն: Որով եւ աստուածադիր զուգութեամբ զուգուած ամուսիններն՝ Ստոլծոյ օրհնութիւնն իրենց վերայ կատարուած պիտի տեսնեն շարաշար զաւակներու եւ թուներու ածելութիւնն տեսնելով:

« Գարձեալ լուարուք՝ զի
 ասացաւ առաջնոցն. Մի՛ երգ-
 նուցուս սուտ, բայց հատու-
 ցես Տեառն զերգմունս քո: Այլ
 ես ասեմ՝ ձեզ. Ամենևին մի՛
 երգնուլ մի՛ յերկինս. զի աթոռ
 է Աստուծոյ. և մի՛ յերկիր. զի
 պատուանդան է ոտից նորա. և
 մի՛ յԵրուսաղէմ, զի քաղաք
 է մեծի արքայի. և մի՛ ի գլուխ
 քո երգնուցուս, զի ոչ կարես
 մազ մի սպիտակ առնել կամ
 թուխ: Այլ՝ եղիցի ձեր բան,
 այոն՝ այո, և ոչն՝ ոչ. զի աւե-
 լին քան զայն ի չարէն է »:
 (Մատ. Ե. 33—37):

Դ. Օրէնքի պատշաճի. • Սուտ եր-
 դում չանես, բայց երդումդ կատա-
 րես Աստուծոյ:

Դ. Նոր օրէնքի պատշաճի. • Եր-
 դում չանես ամենեւին . . . ձեր
 խօսքն լինի միշտ ճշմարիտ:

Օրէնքն երդում կաահանջէր սուտ
 խօսող կարծուած մարդէն. եւ սուտ
 երդում կարգելէր: Փրկիչը կպատ-
 ուիրէ, որ երբէք սուտ չխօսին, Եթէ
 զգուշանանք սուտ խօսելէն, եւ ճըշ-
 մարիտ խօսինք, երդումի հարկ չպիտի
 մնայ երբէք: Ըստ այսմ՝ Նոր կեան-
 քի այս պատուէրն՝ Օրէնքին բուն
 նշանակութիւնն կպատուիրէ: եւ ոչ
 թէ կհակառակի Այսպէս եւ ճըշ-
 մարտութիւն խօսելն՝ սուտ երդում
 չանելու պատուէրին բուն իսկըրումն է:

« Լուարուք զի ասացաւ. Ակն
 ընդ ական, և ատամն ընդ ատաման, Այլ ես ասեմ՝ ձեզ.
 Մի կալ հակառակ չարին. այլ
 եթէ ոք ածիցէ ապտակ յաջ
 ծնօտ քո՝ դարձո՛ նմա և զմիւ-
 սըն, Եւ որ կամիցի ոք դատել
 և ատնուլ զշապիկ քո՝ թո՛ղ
 ի նա և զբաճկոն քո, Եւ որ
 տարապարհակ վարիցէ զքեզ
 մղոն մի, երթ ընդ նմա և եր-
 կուտ, Որում խնդրէ ի քէն
 տո՛ւր, և որ կամիցի փոխ առ-
 նուլ ի քէն, մի՛ դարձուցաներ
 զերեսս» : (Մատ. Ե. 38—42) :

Ե. Օրենքի պատուէրն. « Աջքի տեղ
 աջք. ակուայի տեղ՝ ակուայ» :

Ե. Նոր կեանքի պատուէրն. « Չա-
 ըին հակառակ չար մի հատուցաներ.
 այլ բարի արմս » :

Օրէնքի պատուէրն ճշդութեամբ
 կկատարէր Խորայէլի ծերակոյտն. —
 դատաստանի մէջ ոյժ կտար տկա-
 րին. եւ վնասապարտին ճեւքը կը-
 տկարացնէր. այս ատեմնին կը իմէր
 ամեն զրկուածն, եւ իրեն վնասողին
 կվնասէր հաւասար չափով : Այս օ-
 րէնքը դրուած էր, որ զրկողն եւ
 հարկամողն փորձով հասկանային. թէ
 իրենց որ եւ է ընկերին վնասելով,
 իրենց եւս վնասաց կլինին մի եւ
 նոյն վտանգով : Փրկչին հրամայած
 Նոր կեանքի պատուէրն՝ այս մի եւ
 նոյն օրէնքի բուն սգին ունի իւր
 մէջ. զոր եթէ մարդիկ առհասարակ
 պահեն, կվերցուի ամեն հակառա-
 կութիւն եւ չարիք : Փրկչին հրամա-
 յած պատուէրն այն կատարելութիւնն

ունի, որ պահող աստուածապաշտը
կզգուշացնէ՝ ընկերին չարիք հասցնե-
լէ: Որոյ գործադրուիլուն այս կ'ըստ
պիտի լինի օրինական ատեաններում:
Վտանգուած ընկերն՝ եթէ բողոքէ
ատենին, ատեանը կկապէ զվնասա-
պարսն: Եւ կզօրացնէ վտանգուածի
ձեռքը: որպէս զի կարող լինի փո-
խարինել իւր վնասապարտին գործած
չարիքին՝ մի եւ նոյն չափով: Այն մի-
ջոցումն զրկուածն կխորհի թէ դի-
մացի կապուած ընկերն՝ չարագործ
էր, եւ չար գործեց իւր աչքն հա-
նելով, կամ ատամն կոտրելով: Իւ
այժմ եթէ ինքն եւս հանէ նորա
աչքն, կամ կոտրէ ատամը, չարա-
գործ պիտի լինի նորա նման: Եւ իւր
աչքն կամ ատամն յետս ընդունած
պիտի չլինի, այլ բոլոր շահն՝ այն
պիտի լինի, որ ստահակներն պիտի
հասկանան, թէ արդարութեան ատեանը
կզօրացնէ զրկեալին ձեռքը, եւ կհատուցանէ
գործուած չարիքը:

Իսկ եթէ Փրկչին հրամայած նոր
կեանքի պատուէրն կամի գործադրել,
այն ժամանակ կխորհի զրկեալը: Ահա
չարագործը կապուած է օրէնքի ատե-
նումն եւ տկարացած, եւ ես զօրա-
ցած եմ՝ ու պիտի հանեմ նորա աչքը,
կամ կոտրեմ ատամը: Դատաստանի
այս պատկերն եւս բաւական կըսթա-
փեցնէ ստահակներն, ուրեմն ինչ
հարկ կայ, որ ես եւս չարագործ լի-
նիմ այս իմ յանցապարտիս նման,
եւ կդառնայ նորան, ու կասէ. ըն-
կեր, դու չարիք արըր ինձ, որ իմ
աչքն հանեցիր ահա այժմ արդար-
ութեան ատենի ուժովն զօրացած,
կարող եմ ես եւս քո աչքն հանե-
լու: այլ քեզ կբաշխեմ քո աչքը,
գնա, եւ այսուհետեւ չար մի գոր-
ծեր:

Նոր կեանքի այս պատուէրն՝ հա-
կառակ չէ՝ Օրէնքին: այլ մահաւանդ
օրէնքի ոգին ճշգրութեամբ կատարե-
լով հանդերձ, աւելի եւս արդարու-

թիւն մի կգործէ՝ չարագործութիւնէ
յետ սրահերով զրկեալին ձեռքը: Այս-
պէս է մի եւ նոյն ընտանիքի կամ
եկեղեցւոյ անդամներուն մէջ պա-
տահած հակառակութեան եւ կռուի
դատաստանն, յորում եթէ մէկն
բարկանայ, եւ աստակ զարնէ, աս-
տակոտողն պիտի զիջանի, եւ չարիքին
փոխարէն չարիք պիտի չհատուցանէ,
որով միայն կ'լինի խողաղութիւն: Ար-
պէս զի որ եւ է հակառակութիւն իս-
պառ վերանայ, նոցա բուն պատ-
ճառն հողը կարօտութիւնն վերցնող
պատուերներ կսահմանէ. այն է՝ դա-
տաստանով շապիկ պահանջողին՝ բաժ-
կոն եւս տալ կամսորութեամբ, ան-
ծանօթ մի ճանապարհորդ. եթէ խնդ-
րէ գնալ իրեն հետ մի մըն, առաջ-
նորդեւ մինչեւ երկու մըն եւս.
խնդրողին տալ փոխ առնուլ խնդ-
րողէն երես չարձնել: Այսպէս՝ չարը
պատժելու դատաստանին փոխանակ,
չարութեան բուն պատճառն արմա-

տաքի խելու բարոյական կպատուի-
րէ Փրկիչը՝ Նոր կեանքի բարոյակա-
նումն, եւ որ՝ օրէնքի սահմանած
դատաստանին բուն ոգին է եւ նշա-
նակութիւնն: Որոյ գործադրութիւնն՝
աւելի եւս արդարութիւն ունի, քան
թէ փարիսեցւոց դատաստանում կա-
տարուած եւ պաշտուած կերպն:

ԺԳ.

« Լուարուք ապաքէն. զի ա-
սացաւ. Սիրեցես զընկեր քո՝
և ատեցես զթշնամին քո: Այլ
ես ասեմ՝ ձեզ. Սիրեցէք զթըշ-
նամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս
ձեր. բարի արարէք ատելեաց
ձերոց. և ազօթս ի վերայ այ-
նոցիկ՝ որ լլկենն զձեզ և հալա-

ծեն. Զի եղիջիք որդիք Հօր
ձերոյ որ յերկինս է. զի զա--
րեգակն իւր ծագէ ի վերայ չա-
րաց և բարեաց. և ածէ անձրև
ի վերայ արգարոց և մեղաւորաց.
Զի եթէ սերիցէք զայնոսիկ որ
սիրենն զձեզ, զի՞նչ վարձք իցեն.
ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն
գործեն. Եւ եթէ տայցէք միայն
ողջոյն բարեկամաց ձերոց, զի՞նչ
աւելի առնէք, ո՞չ ապաքէն մաք-
սաւորք և մեղաւորք զնոյն գոր-
ծեն. Արդ եղերո՞ւք դուք կա-
տարեալք, որպէս և Հայրն ձեր
երկնաւոր՝ կատարեալ է »:
(Մատ. Ե. 43—48):

Այս պատուէրը՝ նախընթաց պա-
տուէրին համեմատութեամբ՝ աւելի
ընդհանուր բնութիւն մի ունի. եթէ
առաջինն՝ ընտանիքի, աղբակցի կամ
կրօնակցի վերաբերութեամբ պատ-
ուէրած է. այս երկրորդն այլազգի
եւ այլակրօն դրացիներու վերաբե-
րութեամբ պատուիրած է: Թշնամի՝
խկապէս երես քարձնող եւ յընդու-
նող կնշանակէ, յորում՝ հաւատքի եւ
ցեղի միութենէն հեռի մի օտարու-
թիւն եւս կիմացուի:

Փրկչին կատարած տնօրէնութեան
մի մեծ խորհուրդն էր, որ թէ առ-
տուածածանօթ հրեաներն եւ թէ
աստուածածանօթ հեթանոսներն միոյն
Աստուծոյ հաճութիւն պիտի խոնար-
հեցնէր, եւ Նոր կեանքին պիտի հրա-
ւերէր. այսպէս գուշակուած էր Մար-
գարէներում. եւ այսպէս վկայեց եւ
ինքն Փրկիչն, թէ Տաճարի գաւթէն
գուրս գտնուած հօտերն եւս միա-
սին պիտի ժողովէ. վասն որոյ եւ

Նոր կեանքի պատուէրներն՝ և ի կատարեալ եւ միանգամայն ընդհանուր բնութեամբ կուսմանէ, զոր պիտի պահեն Նոր կեանքն ընդունող ամեն ազգերն, որ գիտեն, թէ իրենք՝ միոյն Աստուծոյ երկնաւոր Հօր որդիքն են. որով իսպառ կվերնայ ազգերու մէկմէկու դէմ ունեցած այն հին ատելութիւնն, որ Օրէնքի ժամանակներն՝ անվերջ կշարունակուէր.

Թշնամին սիրելով, նորա թշնամութեան պատճառն կվերցնենք, հետեւաբար նա եւս ընկեր կդառնայ, այս միութիւնն ամուր կը կապուի, եթէ միայն՝ Աստուծոյ արքայութեան ամենազօր զօրութեան հաւատքն հաստատուն կերպով կհաւատան այն թշնամիներն, Այս հաւատքի ներգործութիւնն՝ իրապէս կպատկերացնեն աստուածաշունչ պատմութիւններն՝ որ կատարուել է եզրիպտական փարաւօնի վերայ, եւ Քանանացի ազգերու տէրութիւններուն վերայ:

Սուրբ Աւետարանի պատուիրած Նոր կեանքի բարոյականի այս սէրն է Օրէնքի լրումն. զոր եթէ չունի մէկն, չէ կարող Նոր կեանքի քաղցրութեան ճաշակն առնուլ: Սիրելին սիրել եւ բարեկամն ողջունել՝ ամեն մեղաւորներն եւս կանեն սովորաբար. կենդանիներն եւս իրենց զոյգերն ու ձագերը կսիրեն: Այլ կատարեալ մարդու սրբարութեան առաւելութիւնն ու բուն իսկ կատարելութիւնն յայնմ է, որ թշնամին եւս սիրէ. անհոգիներն օրհնէ, ատեցողներուն բարի անէ, եւ հալածողներուն ու չարչարողներուն վերայ աղօթք անէ. մյս է Աստուծոյ որդիներուն յատկութիւնն:

Կան մարդիկ, որ այս՝ թշնամին սիրելու բարոյականն՝ անբաւական կհամարին խոնարհեցնելու այն դրացիներն, որ իբնէ աւազակաբարոյ են. եւ ուրիշի վաստակն յսիշտակելու եւ հարեւանը գերելու քաղաքավարու-

Թիւնն ունին, Այսպիսի դէպքերն
անտեսած չէ Փրկիչը Նոր կեանքի
բարոյականի պատուէրներումն. եւ
յատկապէս կյաւելու մի առակ, որով
կուսուցանէ, Թէ Աստուծոյ արքա-
յութիւնն աջողէ ետքն՝ արքայութեան
որդեքն ինչպէս պիտի վարուին այն
աւազակաբարոյ դրացի ցեղերուն հետ,
որ Միոյն Աստուծոյ արքայութեան
ամենազօր զօրութեանը չեն խոնար-
հեր. եւ այս հանդէսն այսպէս կը-
պատկերացնէ առակով:

«Նման է արքայութիւն երկ-
նից՝ ուռկանի արկելոյ ի ծով
և յամենայն ազգաց ժողովե-
լոյ՝ զոր՝ իբրև լցաւ՝ հանեալ
ի ցամաք, և նստեալ ժողովեցին
զբարի բարին յամանս, և ըզ-
սոտանն ի բաց ընկեցին: Այն-
պէս եղիցի ի կատարածի աշ-


խարհիս, ելցեն հրեշտակք, և
մեկնեցցեն զչարս ի միջոյ, ար-
դարոց, և արկցեն զնոսա ի հնոց
հրոյն. անդ եղիցի լալ և կըր-
ճել ատամանց:


«Ասէ ցնոսա Յիսուս. Իմա-
ցարձիք զայս ամենայն. Ասեն
ցնա. Այո՛, Տէր: Եւ նա ասէ
ցնոսա. վասն այսորիկ՝ ամենայն
դպիր աշակերտեալ արքայու-
թեան երկնից, նման է առն
Տանուտեառն, որ հանէ ի գան-
ձէ իւրմէ զնոր և զհին»: (Մատ.
ԺԳ. 47—52):

Այս առակն բովանդակապէս կը-
վերցնէ այն տարակցսն, զոր կտարա-
կուսին ոմանք. եւ բացայայտ կանէ,
Թէ Նոր կեանքի բարոյականն՝ իսկա-
պէս կատարեալ բանականութեան

բարձրը կսահմանէ ճիշդ սահմաններ
ըով. որոնցմէ դուրս ելլողն՝ չէ կա-
րող բանակախ կատարելութիւնն՝ ան-
վըթար պահել իւր վերայ եւ իւր
ընտանիքում. այլ կողայանայ:

ԿՈՒՐԵՂ ՎԱՐԴ՝ ՍՐԱՊԵՅՆ





ԳԻՆՆ Է 20 ԿՈՂԷԿ.

5420

2013

« Ազգային գրադարան



NL0032621

[Handwritten signature]

